Social Security

Հասարակական Ապահովածութեան

www.ssa.org

Անկարութեան Ապահովագրման Նպաստները

Ի՞նչ է Հասարակական Ապահովածութեան Անկարութեան Ապահովագրումը

Հասարակական Ապահովածութիւնը մի ընկերային ապահովագրական ծրագիր է, որ ամսական նպաստներ է տալիս աշխատավորներին, որոնք անկար են և չեն կարողանում աշխատել։ Կացութիւնը բաւականաչափ ծանր պէտք է լինի, որ արգելի անձը աշխատանքից մի տարով կամ աւելի, կամ գուցէ մահ պատճառի։ Նպաստներ ստանալու իրաւասութիւնը կախեալ է ձեր վճարած կամ ձեր գործատիրոջ վճարած Հասարակական Ապահովածութեան տուրքերից։

Նպաստների պայմանունակութիւնը կախեալ է Սոշըլ Սեքիւրիթի տուրքերից։ ինչքան շատ էք շահում այնքան շատ կը լինի ձեր ամսական նպաստները։

Եթէ անկար էք դառնում 24 տարեկանից առաջ, դուք ընդհանրապէս կարիքը կ՚ունենաք վեց վարկերի (six credit) , երեք տարիներ սկսած ձեր անկարութիւնը նախորդող տարիների ընթացքում։

Եթէ 24–ից 30 տարեկան էք, դուք ընդհանրապէս վարկերի կարիքը կ՚ունենաք 21 տարեկանից մինչև ձեր անկարութեան թուականը երկարող ժամանակի կէսի համար։

Եթէ անկար էք դարձել 31 տարեկանին կամ աւելի մեծ տարիքում, վարկերի գումարը կախեալ կը լինի ձեր տարիքից երբ դուք անկար դարձաք։ Դուք նաև պէտք է ձեռք բերած լինէք գոնէ 5 տարուայ համարժէք վարկեր (վարկերից 20–ը) ձեր անկար դառնալու նախորդ 10 տարիների ընթացքում։ Քաղաքացիութիւնը պահանջւած չէ նպաստներին իրաւասու լինելու համար, բայց դուք պէտք է ունենաք Ամերիկայի Միացեալ Նահանգներում աշխատելու օրինաւոր իրաւունք։

Ո՞վ Կարող Է Անկարութեան Նպաստներ Ստանալ

Նպաստները տրւում են աշխատողներին և ընտանիքների որոշ անդամներին, ներառեալ.–

- Ձեր չամուսնացած, բայց 18 տարեկանից փոքր վաւակը, կամ 19 տարեկան, բայց դեռևս միջնակարգ դպրոցի (high school) լիաժամ աշակերտ է։
- Ձեր ամուրի վաւակը, որ 18–ից մեծ է, եթէ անկար է դարձել 22 տարեկանից առաջ։
- Ձեր ամուսինը, եթէ 62 տարեկան է, կամ որևևե մի տարիքից խնամում է ձեր երեխային, որ 16 տարեկանից փոքր է կամ անկար է և նպաստ է ստանում։

Ի՞նչպես Դիմել Անկարութեան Նպաստի Համար

Հնարաւորին չափ դիմումնագիրը հեշտացնելու համար, դուք կարող էք ընտրել դիմում հեռախօսով, նամակով, կամ էլ համայնքի մեր գրասենեակներից որևէ մէկում։

Ձեր պահանջարքը արագացնելու համար, կարող են ծառաել անուններ, հասցէներ, հեռախօսի համարներ, բուժման թւականներ և բուժման տեսակներ. ստացած իւրաքանչիւր բժշկից, բուժարանից կամ հիւանդանոցից, որպէսզի մենք կարողանանք ունենալ օրինակներ ձեր բժշկական գրառումներից։ Դիմելու հանդիպման ժամանակ, դուք պէտք է պատրաստ լինէք արծարծելու ձեր աշխատանքային անցեալը նախորդ 15 տարուայ ընթացքում։ Եթէ դուք ձեր սեփական գործատէրն էք, ձեվանից կպահանջւի նախորդ տարուայ տուրքերի վաւերաթուղթը (W-2 Form) կամ հետադարձ տուրքերի փաստագիրը (tax return)։

Ո՞վ Է Վճռում Անկարութեան Գոյութեան Որոշումները

Մենք Անկարութիւնը Վճռելու Նահանգային Ծառայութեան (State's Disability Determination Service-DDS) ուղարկելու ենք ձեր պահանջարքի բժշկական բաժինն Անկարութիւնը արժէքաւորելու վարժ մասնագէտներ կստանան ձեր բժշկական գրառումը, կը ստուգեն ձեր տրւեալները և որոշում կտան ձեր հարցին շուրջ։ Եթէ յաւելեալ տեղեկութիւնների կարիք կգան, նրանք գուցէ բժշկական քննութիւն կնշանակեն ձեվ համար, բայց ոչ ձեր վճարումով։

Ե՞րբ Կը Սկսեն Նպաստները

Եթէ ձեր դիմումնագիրը վաւերացւեց, ձեր նպաստները կարող են սկսել, առաւելագոյնը մինչև վեցերորդ ամիսը, այն թւականից երբ տւեալները ցոյց են տալիս, թէ ձեր անկարութիւնն սկսել է։

Մեդիքերը (Medicare) Ի՞նչպէս Կարող Է Ձեվ Օգնել

Մեդիքերի նպաստները ինքնաբերաբար տրամադրելի կը լինեն այն ժամանակ, երբ դուք շարունակ երկու տարի ստանալիս լինեք անկարութեան նպաստները։ Medicare–ը առողջապահական ապահովագրման դաշնակցային ծրագիր է անկար կամ 65 տարեկան և աւելի բարձր տարիք ունեցող մարդկանց համար։ Դա կարող է օգնել հիւանդանոցի և բժշկի ստացագրերը վճարելու։

Եթէ Չէք Կարողանում Աժանանալ Հասարակական Ապահովածութեան

Եթէ դիմում էք Հասարակական Ապահովածութեան Անկարութեան նպաստների համար և բաւարար աշխատանքի վարկեր չունէք Social Security-ի պայմաններում, մենք կը նայենք եթէ կարող էք արժանանալ անկարութեան նպաստներին. ըստ Ապահովածութեան Յաւելեալ Եկամուտի (SSI) ծրագրին։ SSI-ը գումարներ է տալիս անկարներին, կոյրերին, կամ 65 տարեկան և աւելի տարեց մարդկանց, որոնք չունեն չնչին եկամուտ կամ եկամտի աղբիւր։

Իրաւասու լինելու համար, դուք նախքին աշխատանքի կարիքը չունեք։ Զոյգ ծրագրներն էե տնօրինում են Հասարակական Ապահովածութեան Տնօրինութեան կողմից. բայց SSI-ն չի ֆինանսաւորում Social Security-ի տուրքերի միջոցով։ Անկարութիւնն էլ որոշւում է նոյն ձևով, բայց միւս կանոնները տարբեր են։ SSI-ի պայմաններում անկարութեան նպաստների մասին յաւելեալ տեղեկութիւնների համար, պահանջէք *Ապահովութեան Յաւելեալ Եկամուտի Նպաստները ''Supplemental Security Income Benefits"*-ի տեղեկատու գրքոյկը։

Ի՛նչքան Երկար Կտևեն Անկարութեան Նպաստները

Հասարակական Ապահովածութեան Անկարութեան Նպաստները տևում են այնքան, ինչքան դուք մնում էք անկար և աշխատելու անկարող մինչև կարողանաք կանոնաւոր կերպով աշխատեք։

Դրանով հանդերձ եթե ջանանաք, որ աշխատեք և բժշկական տեսակետից անկար համարուեք, յատուկ օրենքներ կան, որ ձեզ իրաւունք կտան շարունակել ստանալ նպաստները մինչև այն ժամանակ, որ հնարաւորութիւն ունենաք սովորական կերպով աշխատել։ Դրանք ընդգրկում են հետևեալները.-

- Աշխատանքային փորձառական շրջան-9 ամիս, ընդ որում ձեր շահերը չեն ազդի ձեր նպաստներին։
- Իրաւասութեան երկարաձգուած շրջան-36 ամիս, ընդ որում կարող էք նպաստ ստանալ որևէ ամիս եթէ ձեր շահոյթը 780 դոլարից նւազ լինի։
- Հանուրդներ պակասութեան-կապւած ծախսերի համար-ձեր անկարութեան բերումով, աշխատանքային ծախսերը կը վերչւեն, եթէ ձեր շահոյթը ցոյց տա, թէ դուք իսկական աշխատանք էք անում, և
- Medicare-ի շարունակութիւնը-ձեր Medicare-ի ծածկոյթը կշարունակի '« ամիս աշխատանքային փորձառական շրջանից ետք։ Եթէ ձեր Մըդիչարը-ի ծածկոյթը կանգ առնի ձեր աշխատանքի պատճառով, դուք կարող էք ամսավճարով գնէք։

Անկարութեան աշխատանքի խրախուսականների մասին յաւելյալ տեղեկութիւնների համար պահանջէք *Անկարութիւնով Աշխատել...Ինչպէս կարող Ենք Օգնել ''Working While Disabled...How We Can Help''* գրքոյկը։ (Հրատարակչութիւն Թիւ 05-10095)։

Ձեր պարագան կքննուի հերթականօրէն, որոշելու համար եթէ դեռևս անկար էք։ Ձեր պարագայի քննուելու հաճախականութիւնը կախեալ է ձեր վիճակը բարելաւման ինչ հաւանականութիւն ունի։ Քննարկումները կարող են կրկնուել ամէն 6-ից 18 ամիս, երբ բժշկական բարելաւում սպասւում և ամէն եօթը տարին մէկ երբ բարելաւում չի սպասւում։

Յաւելեալ Տեղեկութիւնների Համար

Ձեր շատ հարցերին, որ կարելի է ունենաք պատասխաններ գտնելու համարշ դիտեք մեր էջ կայքը ***www.ssa.gov*** և Հասարակական Ապահովածութեան ուրիշ ծառայութիւնների համար, որ կարելի է կարիքն ունենաք։ Դուք կարող էք հրատարակութիւններ և ձևեր պատուերէք, օգտագործէք մեր համակարգչի գծի, ***Հանգստաթոշակ և Նպաստների Ծրագրողները,*** ցանկանալ ստանալ ***eNews****, մեր անուճար էլեկտրոնիկ լրագիրը, և մինչև անգամ էլեկտրոնային դիմում կատարել համակարգչի միջոցով*։ Մեր ինթըրնեթի ծառայութիւնների մեծամասնութիւնը տրամադրելի է միայն Անգլերեն լեզւով։ Դուք նոյնպէս կարող էք մեզ հեռաձայնէք անուճար համարով **1-800-772-1213**։ Հեռախօսի միջոցով մենք միայն կարող ենք յատուկ հարցերին պատասխանել, առ. ժամը 7-ից մինչև երեկ. ժամը 7-ը աշխատանքի օրերին, և ինքնաշխատ հեռախօսի միջոցով օրական 24 ժամ ծառայութիւններ կտրամադրենք։ Եթէ դուք խուլութիւն ունեք կամ լսողութեան դժւարութիւն ունեք, կարող էք հեռաձայնէք մեր TTY համարը, 1-800-325-0778 առ. ժամը 7-ից մինչև երեկ. ժամը 7-ը աշխատանքի օրերին։

Եթէ **թարգմանիչի կարիքն ունք**, Սոշըլ Սեքիւրիթի գործերը կատարելու համար, մենք անվճար կապահովենք մէկը եթէ պահանջէք։ Խնդրւում է նախ հեռաձայնեցէք, որպեսզի մէկը, որ խօսում է ձեր լեզուն ձեզ օգնելու համար տրամադրելի լինի։

Բոլոր հեռաձայները կմնան գաղտնի-թէ նրանք կատարւած լինեն մեր անուճար համարով և կամ հեռաձայնած լինէք մեր տեղի գրասենեակներին։ Մենք նոյնպէս կցանկանաք վստահ լինել, որ դուք ծառայութիւնները ստանաք ճշգրիտ և քաղաքաւար կերպով։ Դրա համար մենք ունենք երկրորդ Հասարակական Ապահովածութեան ներկայացուցիչ, որը հսկում է որոշ ստացւող և դուրս գնացող հեռաձայները։

Social Security Administration
Disability Benefits (Armenian)
Publication No. 05-10701 - ARM
January 2002